ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

# Անուշավան Սոսանվեր

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

| Անուշավան Հայկազունի<br>Անուշաւան Սօսանուէր | |
|---|---|
| Հայոց Նախապետ Արքա | |
| Իշխանություն | մ.թ.ա. 1725 - մ.թ.ա. 1662 |
| Թագադրում | մ.թ.ա. 1725 |
| Հանձնում | մ.թ.ա. 1662 |
| Ծնվել է՝ | մ. թ. ա. 1725 |
| Մահացել է՝ | մ. թ. ա. 1662 |
| Նախորդ | Կարդոս Հայկազունի |
| Հաջորդող | Պարետ Հայկազունի |
| Տոհմ | Հայկազունիներ |
| Հայր | Կարդոս Հայկազունի |
| Երեխաներ | Պարետ Հայկազունի |



**Անուշավան Սոսանվեր** նաև **Անուշավան Հայկազունի** (ծննդյան թվականն անհայտ - մ.թ.ա. 1662), Հայոց նախապետ արքա մ.թ.ա. 1725 - մ.թ.ա. 1662 թվականներին, Արա Բ Կարդոսի որդին, Պարետ Հայկազունու հայրը, Հայկազունիների արքայական տոհմից։

Անուշավանը Սոսանվեր էր կոչվում նրա համար, ճանի որ մանկությունից նվիրվել էր Սոսյաց անտառին։ Հոր՝ Կարդոսի հետ միասին գերի է տարվել Նինվե, բայց իր իմաստությամբ պալատականների սիրտը շահելով՝ ազատվել և ձեռք է բերել իր գահը, մնալով հարկատու Ասորեստանին[1]։ Հաջորդել է հորը՝ Կարդոս Հայկազունուն։

Մովսես Խորենացին հաղորդում է, որ Արա Բ Կարդոսը թողնում է. «արու զավակ՝ շատ գործունյա հանճարախոս Անուշավան Սոսանվերին, որովհետև նա պաշտամունքի համաձայն նվիրված էր Արմենակի՝ Արմավիրում գտնվող սոսի ծառերին, որոնց տերևների սոսափյունից՝ նայելով ճամու ուժին և ուղղությանը՝ մեր հայոց աշխարհում սովորեցին գուշակություններ անել և այն էլ երկար ժամանակ»։

Խորենացու պատմագրությունից ակնհայտ է, որ ստանձնելով նախապետի պաշտոնը (գահը), Անուշավանը իր առջև խնդիր է դնում նախ վերականգնել Հայքի տարածքային ամբողջականությունը, ապա վերջ դնել Ասորեստանից ունեցած կախմանը, որը կրկին Խորենացու վավերագրմամբ, տեղի էր ունեցել Շամիրամի կողմից Արա Գեղեցիկի սպանությունից հետո, երբ երկրի հարավային տարածքները և Հայկյան Արամի կողմից նվաճված Ասորեստանյան դաշտը, անցել էր Նինվեի տիկնոջ՝ Շամիրամի տիրապետության տակ. «Այս Անուշավանը բավական ժամանակ արհամարհանք կրելով Զամեսից (սա՝ Շամիրամի որդին ու հաջորդն էր), տառապում էր արքունիքի դռանը. հետո բարեկամներից օգնություն գտնելով ձեռք է բերում մեր երկրի մի մասը՝ կառավարելու համար իբրև հակատու՝ վերջապես նաև ամբողջ երկիրը»։

Անուշավան Սոսանվերի օրոք էր, որ Եգիպտոսից հայերենի վերադարձան հիքսոսները՝ իրենց բանակով և բնակչությամբ։ Թեպետև Խորենացին այս մասին լռում է, բայց Անուշավան նախապետի հաջորդ նախապետ համարելով Պարետին, պետք է կարծել, որ Եգիպտոսից հայրենիքի վերադարձած բնակչությանը Անուշավանը բնակության վայր էր հատկացրել «Արամի Միջագետը», որտեղ էլ կազմավորում է հայկական նոր պետական միավորում, որը հայտնի է Միտանի թագավորություն անվանումով։

Ըստ Խորենացու Անուշավան նախապետին հաջորդել է Պարետ նախապետ Հայկազունին, որը համարվում է նաև Միտանի արքաներից մեկը։

## Իրավիճակը Առաջավոր Ասիայում Անուշավան նախապետի օրոք

Անուշավանի օրոք, ինչպես իր հոր՝ Արա Բ Կարդոսի ժամանակ, շարունակվեց Կարդուների և Բաբելոնի հակամարտությունը։ Ընդ որում շուտով պարզվեց, որ Բաբելոնը այս կամ այն չափով հաջող պատերազմում էր միայն Սամսու-իլունայի ջնորհիվ, որի մահվանից հետո նրա թողած թագավորությունը անկում ապրեց։ Մ.թ.ա. 1711 թվականին Կարդուները և Էլամի թագավորության բանակը լայնածավալ հարձակման անցան Կենտրոնական և Հարավային Միջագետքի ուղղությամբ և վերջնետ դրեցին Բաբելոնի տարածաշրջանային կարգավիճակին[2][3]։ Այսուհետ, չնայած նրան, որ Բաբելոնում արքայական իշխանությունը պահպանվեց, որևէ տարածաշրջանային դերի մասին վերջինս արդեն խոսել անգամ չէր կարող։ Դրանից հետո Բաբելոնի արքաների իշխանությունը տարածվում էր առավելագույնը միայն Բաբելոն քաղաքի ու հարակից տարածքների վրա։ Հենց այս ժամանակներից Բաբելոնի պետությունը սկսեց դանդաղորեն մահանալ և իր վերջը գտավ մ.թ.ա.1595 թվականին, երբ վերջնականապես ընկավ Կարդունիասի իշխանության գերիշխանության տակ։ Հատկանշական է, որ առաջինը իրեն Բաբելոնի արքա հայտարարած Կարդունիասի հերթական իշխան Ագում Բ Գրուրյան սուրբ (Գագրիմեր՝ mAg-gu-um) (մ.թ.ա. 1571-1549) ընդունվեց և իր հաջորդներին փոխանցեց մի տիտղոս, որում ընդգծված էր վերջինիս անբեկանելի կապը Հայաստանի հետ[4].

« Կասսուի և Աֆֆադի արքա, լայնարձակ Բաբելոն երկրի արքա, Տուպրաշի հաղթահարող, Ալմայի և Պադնայի արքա, Կուտիների արքա »

Արքայական այս տիտղոսը ցույց է տալիս, որ Կուտիումը, որը վաղուց արդեն հիմնավոր կերպով տեղադրվում է Հայաստանի հարավում՝ Կորճայքի ու Պարսկահայքի, ինչպես նաև Վասպուրականի հարավային գավառների տարածքում, ընդգրկվել է Կարդունիասի իշխանության տարածքում, ինչը լրացուցիչ անգամ ցույց է տալիս իշխանության անառարկելի կապը Հայաստանի հետ[5][6]։

## Ծանոթագրություններ


1. «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երեւան, 1942, Հատոր 1, Ցուցակ 1, էջ 172
2. Дьяконов И. М., История Древнего мира, с. 389
3. Բաբելոնի հերթական արքա Աբու-էշուն (մ.թ.ա. 1712-1684) բաբելոնյան սեպագրերին հատուկ ոճով հայտնում է «կասսուներ»-ի դեմ ձեռք բերված հաջողության մասին, սակայն ընդհանուր քաղաքական իրավիճակի վերլուծությունը ստեղծում է լրիվ հակառակ Պատկեր։
4. Дьяконов И. М., История Древнего мира, с. 419-420
5. Արտակ Մովսիսյան, Բարեպաշտ արքաների աշխարհակալություն։ Հազարամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Երևան, 1997
6. Արտակ Մովսիսյան // Հայաստանը Քրիստոսից առաջ Երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների) // Երևան: Ցառն, 2005


## Աղբյուրներ


- «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երեւան, 1942, Հատոր 1, Ցուցակ 1, էջ 172
- «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Ա. ե, ժթ, ի.


դ·ք·խ(https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80&action=edit) Հայկազունիներ (մ.թ.ա. 2107–331) [Բացել]

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Անուշավան_Սոսանվեր&oldid=8201020» էջից